Հայաստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարության
իրավաբանական վարչության դիմումների
և բողոքների քննության բաժնի պետ
Լ. Զաքարյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի նոյեմբերի 25-ից մինչև 2026 թվականի փետրվարի 25-ը ընկած ժամանակահատվածում **իմ՝ ՀՀ ներքին գործերի նախարարության իրավաբանական վարչության դիմումների և բողոքների քննության բաժնի փորձագետ Շահանե Սարգսյանիս** կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ՝

1.Օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան՝ որպես վերադաս վարչական մարմին, վերադասության կարգով վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցել եմ վարչական վարույթներ, ինչպես նաև բողոքարկման վարույթներ՝ վերանայելով Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների կողմից կայացված վարչական ակտերի, գործողությունների (անգործության) իրավաչափությունը:

2.Բողոքարկման վարույթի շրջանակներում օրենքով սահմանված կարգով ապահովել եմ բողոք բերող անձանց լսված լինելու իրավունքը, միաժամանակ, ըստ անհրաժեշտության վարույթում ներգրավվել եմ երրորդ անձանց և ապահովել վերջիններիս լսված լինելու իրավունքը:

3. Իմ կողմից հարուցված բողոքարկման վարույթները վերաբերել են կա՛մ վարչական ակտերի կա՛մ ոստիկանության ծառայողի գործողությունների (անգործության) իրավաչափությանը: Կայացված որոշումներով տրվել են համապատասխան իրավական գնահատականներ:

4.Նշված ժամանակահատվածում թվով 9 վարույթներ եմ իրականացրել, որի շրջանակներում, կապված գործի առանձնահատկություններից, կայացրել եմ և՛ բողոքը մերժելու, և՛ բավարարելու, և՛ կարճման, և՛ առանց քննարկման թողնելու որոշումներ:

5.Նշված ժամանակահատվածում իրականացրել եմ նաև քաղաքացիների դիմումների, բողոքների և առարկությունների քննարկում, սահմանված կարգով և ժամկետներում իմ կողմից տրվել են պատասխաններ:

6. Նշված ժամանակահատվածում իմ կողմից ուսումնասիրվել է թվով 29 վարչական վարույթի նյութեր, որի արդյունքում տրվել է թվով 13 լիազորագրեր:

Հարգանքով՝
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավաբանական վարչության դիմումների և բողոքների քննության բաժնի փորձագետ ***Շահանե Սարգսյան***

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները

Գնահատում եմ _____

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավաբանական վարչության դիմումների և բողոքների քննության բաժնի պետ ***Լիլիթ Զաքարյան***

25.02.2026թ.